ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆԱԿ-ՄԱԾՁԲ-22/06

ք. Երևան «10» «դեկտեմբերի» 2022թ.

Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Է. Սեհինյանի, որը գործում կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՏԱՐՏ ՔՈՓԻ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Չալիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն):

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման 5 աշխատանքային օրվա ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 675 000 **(վեց հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե	**«ՍՏԱՐՏ ՔՈՓԻ» ՍՊԸ**
ք.Երևան, Ա. Արմենակյան 129	ք. Երևան, Նորագավիթ 9-րդ փ, 40 տ
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011023265	հ/հ 2050022291231001
ՀՎՀՀ 00476409	ՀՎՀՀ 02246804
Անտառային կոմիտեի	Տնօրեն
գլխավոր քարտուղարի պաշտոնակատար	Վ. Զարիկյան
Է. Սեհյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«20» «Դեկտեմբերի» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԾՁԲ-22/06 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	նկարագրի դասվածք	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50531200 «Էլեկտրական սարքավորումների (համակարգիչների և օդորակիչների) վերանորոգման և սպասարկման»	«Pantum M6500NW» տպիչների քարթրիջների լիցքավորում ներառյալ տոները, «Canon MF113W» տպիչների քարթրիջների լիցքավորում ներառյալ տոները, Համակարգչային ծրագրերի վերաբեռնավորում, SSD 240GB Ձեռքբերում և տեղադրում, 4GB RAM DDR4 2400MHZ Ձեռքբերում և տեղադրում, «Pantum M6500NW» տպիչների քարթրիջների թմբուկի ձեռքբերում և տեղադրում, «Canon MF113W» տպիչների քարթրիջների ռոլիկի ձեռքբերում և տեղադրում, AMCDomain-ում տեղակայված հոսթինգ համակարգի կարգավորում և խնդիրների վերացում, էլ հասցեների համակարգի խնդիրների վերացում, անհրաժեշտության դեպքում AMCDomain-ում տեղակայված հոսթինգ համակարգի տարիֆային պլանի փոփոխություն, RAM փոխարինում, ներառյալ DDR 4, 4GB-մից կամ համարժեքը,	դրամ	675000	1	ՀՀ, մարզ. Երևան , ք. Արմենական ,129գ1	20.12.22թ

		Asus H110M-K iH110 Intel 1151s. CPU ready, DMI 5GT/s, 1xPCI-e 3.0 (16x), 2PCI-e 1x, Gbt. LAN, 4xSATA3, SB5.1, 2xDDR4 2133MHz up to 32Gb, 2xUSB3.0, COM header, mATX, VGA, DVI, Մոնիտորի վերանորոգում՝ Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում), Անխափան սնուցման սարքի վերանորոգում՝ մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/7Ա, Համակարգչային ցանցի վերանորոգում՝ Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 5 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 8 PORT), կամ համարժեքը, Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 8 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 8 PORT), կամ համարժեքը, Մալուխի անցկացում ներառյալ Մալուխի գինը (գծամետր), Լազերային տպիչի վերանորոգում՝ Լիցքավորում լազերային տպիչների (գունավոր) ներառյալ քարթրիջի չիպը, կամ համարժեքը, Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը), Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Տեֆլոնե լիսեռ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը), Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը), Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը), Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Կարատրոնը թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը) կամ համարժեքը, Մագնիսական լիսեռի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսեռը թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը) կամ համարժեքը, Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը)կամ համարժեքը), Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Թղթի տրման ռետինե լիսեռ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը) կամ համարժեքը), Օդորակիչների սպասարկման և վերանորոգման ծառայություններ՝ Պրոֆիլակտիկա մասնակի:				Քաղաք Երևան, Ա. Արմենակյան 129	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409
Անտառային կոմիտեի
գլխավոր քարտուղարի դիմաշտոնակատար
Է.Սեդրակյան

(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՏԱՐՏ ՔՈՓԻ» ՍՊԸ
ք. Երևան, Նորագավիթ 9-րդ փ, 40 տ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 2050022291231001
ՀՎՀՀ 02246804
Տնօրեն
Վ. Չալիկյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված №2
«10» «Փետրվարի» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԾՁԲ-22/06 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	50531200	«Էլեկտրական սարքավորումների (համակարգիչների և օդորակիչների) վերանորոգման և սպասարկման» ծառայություններ	-	68000	68000	120000	158000	238000	262000	328000	408000	515000	595000	675000	**675000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409
Անտառային կոմիտեի
գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Է. Սեհնյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍՏԱՐՏ ՔՈՓԻ» ՍՊԸ
ք. Երևան, Նորագավիթ 9-րդ փ, 40 տ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h 2050022291231001
ՀՎՀՀ 02246804
Տնօրեն
Վ. Չալիկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված №1.1
«10» «Դեկտեմբերի» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԾՁԲ-22/06 ծածկագրով պայմանագրի

ՄԻԱՎՈՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) (տառերով և թվերով)	ԱԱՀ՝ (տառերով և թվերով)	Ընդհանուր գինը (տառերով և թվերով)
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
Համակարգչի վերանորոգում				
1	«Pantum M6500NW» տպիչների քարթրիջների լիցքավորում ներառյալ տոները	4000	-	4000
2	«Canon MF113W» տպիչների քարթրիջների լիցքավորում ներառյալ տոները	3000	-	3000
3	Համակարգչային ծրագրերի վերաբեռնավորում	5000	-	5000
4	SSD 240GB Ձեռքբերում և տեղադրում	30000	-	30000
5	4GB RAM DDR4 2400MHZ Ձեռքբերում և տեղադրում	19000	-	19000
6	«Pantum M6500NW» տպիչների քարթրիջների թմբուկի ձեռքբերում և տեղադրում	4000	-	4000
7	«Canon MF113W» տպիչների քարթրիջների ռոլիկի ձեռքբերում և տեղադրում	3000	-	3000
8	AMCDomain-ում տեղակայված հոսթինգ համակարգի կարգավորում և խնդիրների վերացում, էլ հասցեների համակարգի խնդիրների վերացում, անհրաժեշտության դեպքում AMCDomain-ում տեղակայված հոսթինգ համակարգի տարիֆային պլանի փոփոխություն	240000	-	240000
9	RAM փոխարինում, ներառյալ DDR 4, 4GB-մից կամ համարժեքը	25000	-	25000
10	RAM փոխարինում, ներառյալ DDR 4, 8GB-մից կամ համարժեքը	45000	-	45000
11	Asus H110M-K iH110 Intel 1151s. CPU ready, DMI 5GT/s, 1xPCI-e 3.0 (16x), 2PCI-e 1x, Gbt. LAN, 4xSATA3, SB5.1, 2xDDR4 2133MHz up to 32Gb, 2xUSB3.0, COM header, mATX, VGA, DVI	40000	-	40000
Մոնիտորի վերանորոգում				
12	Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	8000	-	8000
Անխափան սնուցման սարքի վերանորոգում				
13	Մարտկոցի փոխարինում ներառյալ Մարտկոցը 12Վ/7Ա	12000	-	12000
Համակարգչային ցանցի վերանորոգում				

14	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 5 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 8 PORT), կամ համարժեքը	12000	-	12000
15	Սվիչ տեղադրում ներառյալ Սվիչ 10/100/1000 8 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 8 PORT), կամ համարժեքը	17000	-	17000
16	Մալուխի անցկացում ներառյալ Մալուխի գինը (գծամետր)	400	-	400
Լազերային տպիչի վերանորոգում				
17	Լիցքավորում լազերային տպիչների (գունավոր) ներառյալ քարթրիջի չիպը, կամ համարժեքը	8000	-	8000
18	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը)	6500	-	6500
19	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Տեֆլոնե լիսեռ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը)	11000	-	11000
20	Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը)	6600	-	6600
21	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Թմբուկ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը)	3500	-	3500
22	Կարատրոնի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ Կարատրոնը թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը) կամ համարժեքը	3000	--	3000
23	Մագնիսական լիսերի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսերը թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը) կամ համարժեքը	3300	-	3300
24	Մաքրող դանակի փոխարինում ներառյալ Մաքրող դանակ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը)կամ համարժեքը)	3100	-	3100
25	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Թղթի տրման ռետինե լիսեռ թերմոթաղանթ (Pantum M6500NW Canon կամ համարժեքը) կամ համարժեքը)	6000	-	6000
Օդորակիչների սպասարկման և վերանորոգման ծառայություններ				
26	Պրոֆիլակտիկա մասնակի	15000	-	15000
ԸՆԴԱՄԵՆԸ		533440.0	-	533440.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409
Անտառային կոմիտեի
գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Լ. Սեդրակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՍՏԱՐՏ ՔՈՓԻ» ՍՊԸ
ք. Երևան, Նորագավիթ 9-րդ փ, 40 տ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
h/h 2050022291231001
ՀՎՀՀ 02246804
Տնօրեն
Ա. Չալիկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված №3
«10» «Դեկտեմբեր» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԾՁԲ-22/06 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

«ՍՏԱՐՏ ՔՈՓԻ» ՍՊԸ
ք. Երևան, Նորագավիթ 9-րդ փ, 40 տ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
հ/հ 2050022291231001
ՀՎՀՀ 02246804

Պատվիրատու

Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №_____

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2022թ
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի համարը՝ №
Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
« » « »2022 թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №3.1
«10» «Դեկտեմբեր» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԾՁԲ-22/06 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №_____

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Անտառային կոմիտե» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) և ---------- (այսուհետ՝ Կատարող) միջև « » « » 2022 թ -ին կնքված № ՇՄՆԱԿ-ՄԱԾՁԲ-22/06 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 2022 թ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն